

ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ԸԱԲԱԹԱԹԵՐԹԻ


Հոկտեմբեր 2022

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Ամեն տարի Հոկտեմբերին, հայեր կը տօնեն «Մրբոց Թարգմանչաց» տօնը: Դպրոցէն ներս կը սորվինք Սահակ Պարթեւ կաթողիկոսին եւ Մեսրոպ Մաշտոցին մասին: Կը ծանօթանանք մեր սուրբ թարգմանիչներուն՝ Եղիշէ Պատմիչին, Մովսէս Քերթոզին, Դաւիթ Անյաղթին, Գրիգոր Նարեկացիին, Ներսէս Ծնորհալիին եւ ուրիշներուն:

406 թուականին, այս թարգմանիչներուն շնորհիւ Աստուածաշունչը թարգմանուեցաւ հայերէնի եւ Աստուծոյ խօսքը սկսաւ տարածուիլ ոչ միայն եկեղեցիներուն մէջ, այլ դպրոցներէն եւ տուններէն ներս: Հայ գիրերու գիւտով կարծես հայ ժողովուրդը ունեցաւ նոյն զէնքն եւ նոյն զրահ, ինքզինք պաշտպանելու, չօտարանալու ու չձուլուելու համար: Եւ այսպէս ծնունդ առաւ մեր ազգային ու քրիստոնէական ինքնութիւնն ու մշակոյթը:

Մենք ալ սիրելիներ, գուրգուրանք ու պահենք մեր մայրենի լեզուն: Սորվինք օտար լեզուներ, բայց իրարու հետ միշտ խօսինք հայերէն:



ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

Հին ժամանակ Հայաստանի մէջ հայերէն կը խօսէին, բայց չէին կրնար գրել, որովհետեւ հայերէն գիրեր չկային: Հայ աշակերտները կը կարդային ու կը գրէին օտար լեզուներով (ասորերէն, յունարէն ...):

Այդ օրերուն Հայաստանի մէջ կ'ապրէր Մեսրոպ Մաշտոց անունով վարդապետ մը: Ան ծնած էր Տարօնի Հացեկաց գիւղին մէջ եւ սորված էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն լեզուները:

Մեսրոպ Մաշտոց ուզեց գտնել հայերէն գիրերը: Շրջեցաւ քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ, շատ աշխատեցաւ եւ շատ գիրքեր կարդաց: Օր մը յոգնած, կէս քուն, կէս արթուն, իր աչքին երեւցաւ այբուբենը: Մեսրոպ Մաշտոց Հայաստանի մէջ դպրոցներ բացաւ: Ան իր աշակերտներուն սորվեցուց հայերէն գիրերը եւ եղաւ հայերէնի առաջին ուսուցիչը:

Գիրերու գիւտէն ետք Մեսրոպ Մաշտոց եւ իր աշակերտները թարգմանեցին Աստուածաշունչը՝ Սուրբ գիրքը:

Աստուածաշունչի թարգմանութիւնը այնքա՛ն գեղեցիկ էր ու կատարեալ, որ կոչուեցաւ «Թագուհի Թարգմանութեանց»:

Ամբողջացնոր

Առաջին նախադասութիւնը, որ հայերէնի թարգմանուեցաւ Մեսրոպ Մաշտոցի եւ իր աշակերտներուն կողմէ: Ճա...ա...ել գ...մա...տ...թիւն եւ գ...րա..., ի...անա... գ...ա...ս հան...ա...ոյ:

Միացնոր

- | | |
|--------|----------|
| Մեսրոպ | Խորենացի |
| Եզնիկ | Շիրակացի |
| Մովսէս | Փարպեցի |
| Անանիա | Մաշտոց |
| Ղազար | Կողբացի |
| Սահակ | Պարթեւ |



ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՅ ԵՄ. ԻՆԾԻ ՆՄԱՆ ՀԱՅ ԷՐ ԵՈՒՍՈՒՑ ՔԱՐՇ

Եուսուֆ Քարշ, բուն անունով Յովսէփ Քարշեան, ծնած է Մարտին քաղաքին մէջ, 1908-ին: 1915-ի Հայոց Ցեղասպանութեան ծանր օրերուն, կորսնցուցած է իր քոյրը, իսկ ինք հազիւ փրկուելով, իր ծնողքին հետ հասած է Սուրիա:


Ապա 1924-ին, ծնողքը զինք ուղարկած է Գանատա լուսանկարիչ քեռիին՝ Ճորճ Նազգաշին մօտ: Քեռին տեսնելով Եուսուֆի լուսանկարչական ձիրքերը, զինք ուղարկած է Պոսթոն լուսանկարիչ ճոն Կարոյի մօտ սորվելու:

Չորս տարի ետք, Եուսուֆ Քարշ վերադարձած է Գանատա եւ ստեղծած է իր արուեստանոցը Օթթաուայի մէջ, դառնալով նշանաւոր լուսանկարիչ: Ան լուսանկարած է շատ յայտնի դէմքեր, ինչպէս՝ Էլիզապէթ Բ. Թագուհին, Սոֆիա Լորենը, Ուինսթըն Չրչիլը, Ռոնալտ Ռեկընը, Ֆիտլ Քասթրօն եւ այլն...


Եուսուֆ Քարշ մահացած է 2002 թուականին Պոսթոն, սակայն թաղուած է Օթթաուայի Նոթր Տամ գերեզմանատան մէջ: Օթթաուայի մէջ կը գտնուի նաեւ Եուսուֆ Քարշի քանդակը, որուն հեղինակն է Գանատա բնակող մեծ քանդակագործ բժիշկ Մկրտիչ Տարազճեան:

Եուսուֆ Քարշով կը հպարտանան գանատացիները, կը հպարտանանք նաեւ մենք՝ հայերս, որովհետեւ ան 20-րդ դարու նշանաւոր հայ լուսանկարիչն է:


Աշխարհի եօթ հրաշալիքները



1.- **Արտեմիսի տաճարը** Եփեսոսի մէջ: Յոյն աստուածուհի Արտեմիսի (բնութեան, լուսինի եւ որսի աստուածուհին) նուիրուած տաճար Փոքր Ասիոյ Եփեսոս քաղաքին մէջ: Հերոստրատոս այրեր է տաճարը:



2.- **Հալի Կառնասի դամբարանը** Փոքր Ասիոյ Հալիկառնաս մայրաքաղաքին մէջ (այժմ՝ Թուրքիոյ Պոտրում քաղաքը): Մաւստլոս թագաւորի դամբարանն է:



3.- **Չեւսի արձանը** Յունաստանի Օլիմբիա քաղաքի տաճարներէն մէկուն մէջ կը գտնուէր յոյներու ամենամեծ աստուած Չեւսի արձանը: Ան քանդուած է 394 թուականին: Որոշ մասեր տեղափոխուած են Պոլիս:




4.- **Հռոդոսի կոթողը** Հելլոս աստուծոյ հսկայական արձանը Հռոդոս կղզիին մէջ: Այս կոթողը կործաներ է երկրաշարժէն: Յետագային յայտնաբերուած է արձանին աջ ձեռքի դաստակը, որ այժմ կը գտնուի Բրիտանական թանգարանին մէջ:



5.- **Ալեքսանդրիայի փարոսը** կը գտնուէր Նեղոս գետի Փարոս կղզիին գետեզերքը: Եռայարկ աշտարակ: Գագաթի կլոր սինասարահին մէջ կը վառէր խարոյկը՝ նաւերուն ճամբան ցոյց տալու: Ինչպէս նաեւ հոն տեղադրուած հայելիներուն միջոցաւ կը հետեւէին թշնամիներուն նաւերուն: Ան կործանած է երկրաշարժէն:



6.- **Եգիպտական բուրգերը եւ Սֆինքսը** աշխարհի եօթը հրաշալիքներէն մեզի հասեր են միայն Եգիպտական բուրգերը՝ հին եգիպտական թագաւորներու՝ Փարաւոններու դամբարանները եւ Սֆինքսը՝ մարդու դէմքով, առիւծի մարմինով այդ պահապանը:



7.- **Շամիրամի կախովի պարտէզները** Բաբելոնի մէջ: Ըստ պատմական տեղեկութիւններու՝ Նարուգոդոնոսոսը թագաւորը կառուցեր է իր կնոջ՝ Ամիտիսի համար:

Արշակ և Շապուհ



Պարսկաստանի Շապուհ թագաւորը կ'ուզէր գրաւել Հայաստանը, բայց հայոց զօրքը, գլխաւորութեամբ սպարապետ Վասակ Մամիկոնեանի, հերոսաբար դէմ կը դնէր պարսիկներուն:

Շապուհ զենքի ուժով չհասնելով իր նպատակին կը դիմէ խորամանկութեան: Ան Պարսկաստան կը հրաւիրէ Արշակ Բ. թագաւորը խաղաղութեան պայմանագիր կնքելու պատրուակով: Արշակ Բ. եւ Վասակ Մամիկոնեան կը մեկնին Պարսկաստան:

Արշակ Բ. պարսկական հողին վրայ կը խոնարհի եւ կը զոջայ ըրածներուն համար, բայց երբ ոտքը դնէ հայկական հողին վրայ կը կերպարանափոխուի, հպարտութեամբ կը խօսի, կ'ըմբոստանայ Շապուհին դէմ:

Շապուհ շղթայակապ բանտարկել կու տայ Արշակ Բ. թագաւորը անյուշ բերդին մէջ:

ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՅԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ՓՐՈՖ. ՏՕՐՔ ՍԱՀԱԿԵԱՆ

14 Յունուար 1954-ին Ամերիկա Փենսիլվանիա նահանգին մէջ ծնած ամերիկահայ կլիմագետ փրոֆ. Տօրք Սահակեան կլիմայի վերաբերեալ իր աշխատանքներով 12 Հոկտեմբեր 2007-ին արժանացած է «խաղաղութեան նոպելեան մրցանակին»:

ԳԻՏԷՔ ԹԷ...


Հին ժամանակ մարդիկ կը գրէին քարերու (ժայռերու) վրայ: Յետոյ սկսան կաւէ սալիկներ պատրաստել եւ սուր փայտիկներով գրել թաց սալիկներուն վրայ: Կաւէ սալիկները կը չորցնէին, եւ «գիրքը» պատրաստ կ'ըլլար:

Ապա մարդիկ սորվեցան գրել տերեւներու (պապիրոս), ծառերու կեղեւներու եւ փոքրիկ տախտակներու վրայ:

Մարդիկ կը գրէին նաեւ կենդանիներու մորթին (մագաղաթ) վրայ: Ոչխարներու, այծերու եւ հորթերու կաշին կը մաքրէին հաւասար մասերու կը բաժնէին եւ փետուրէ գրիչներով կը գրէին, յետոյ կը կարէին այդ էջերը եւ գիրք կը կազմէին:

Մեր առաջին գիրքերէն օրինակներ կարելի է գտնել Երեւանի Մատենադարանին մէջ: Այսպէս օրինակ, կը պատմուի թէ օր մը, երբ թշնամին կը յարձակի մեր երկրին վրայ, կը քանդէ մեր գիւղերն ու քաղաքները, վանքերն ու գրադարանները: Երկու հայ կին այրող վանքին գրադարանէն կը փրկեն հսկայական գիրք մը եւ կը հասցնեն Էջմիածին: Այդ գիրքը գրելու համար օգտագործուած է 600 հորթի մորթ:

Այժմ գիրքերը թուղթերու վրայ կը տպուին տպարաններու մէջ: Եւ ըստ աւանդութեան թուղթի գիւտը կատարած է Յայ Լուսն:




clay


papyrus

parchment

Խումբերուն հայերէն անուանումը

Խոռվարար..... խուժան
 Զինուոր..... վաշտ, բանակ
 Զիաւոր զինուոր... հեծելագունդ, այրուձի
 Հետիոտն զինուոր..... հետեւակ
 Գայլ..... վոհմակ
 Զի..... երամակ
 Ոչխար..... հօտ
 Մեղու..... պարս
 Կով, եգ..... նախիր
 Բանալի..... տրցակ





Ո՛Վ Կ՛ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

1- Մերոպ Մաշտոց ո՞ր լեզուները գիտեր:

- ա) Ասորերեն եւ պարսկերեն:
- բ) Յունարեն եւ պարսկերեն:
- գ) Յունարեն, ասորերեն եւ պարսկերեն:

2.- Ո՞վ էր հայերենի առաջին ուսուցիչը:

- ա) Մովսէս Խորենացի:
- բ) Մերոպ Մաշտոց:
- գ) Անանիա Շիրակացի: -

3.- Ո՞վ էր Զեւս:

- ա) Յոյն աստուածուհի մը:
- բ) Յոյն թագաւոր մը:
- գ) Յոյներու ամենամեծ աստուածը:

4.- Աշխարհի եօթը հրաշալիքներէն մեզի հասեր են:

- ա) Հռոդոսի կոթողը
- բ) Շամիրամի կախովի պարտէզները
- գ) Եգիպտոսի բուրգերը եւ Սֆինքսը

5.- Շապուհ...

- ա) Արշակ Բ. թագաւորը բանտարկել կու տայ:
- բ) Հայերուն բարեկամն էր:
- գ) Զէնքի ուժով կը հասնի իր նպատակին:

6.- Տօրք Սահակեան արժանացած է

- ա) Գիտութեան նոպելեան մրցանակին:
- բ) Կլիմայի նոպելեան մրցանակին:
- գ) խաղաղութեան նոպելեան մրցանակին:

7.- Գրէ՛ խումբին անունը:

- ա) Զիերու խումբին կ'ըսենք -----
- բ) Թնդանօթներու խումբին կ'ըսենք -----
- գ) Հետիոտն զինուորներու խումբին կ'ըսենք -----

8.- Կենդանիներու մորթէն պատրաստուած էջը կը կոչուի:

- ա) սալիկ
- բ) պապիրոս
- գ) մագաղաթ
- դ) կաւ

9.- Ո՞վ է Եուսուֆ Քարշ:

- ա) Ֆրանսացի նշանաւոր բանաստեղծ մըն է:
- բ) Հայ նշանաւոր լուսանկարիչ մըն է:
- գ) Հայ նշանաւոր քանդակագործ մըն է:
- դ) Հայ նշանաւոր ճարտարապետ մըն է:

10.- Օթթաւայի մէջ կը գտնուի Եուսուֆ Քարշի քանդակը, ո՞վ է այդ քանդակին հեղինակը:

- ա) Բժիշկ Մկրտիչ Տարազճեան:
- բ) Սուրէն Ստեփանեան:
- գ) Ճոն Կարօ:
- դ) Զաւէն Խտրշեան:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757

Email: sylva@horizonweekly.ca

Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի Թիւր պատրաստեց՝ Սալբի Էլէյճեան Զեայղացք՝ Լորի Խաչերեանի